



**ԱԳՐՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**  
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
 AGRISCIENCE AND TECHNOLOGY    АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական  
պարբերական

**ISSN 2579-2822**



Կայքէջ՝ [anau.am/hy/tegheskagir](http://anau.am/hy/tegheskagir)

ՀՏԴ 338.43:634.8(479.25)

## ԽԱՂՈՂԱԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Է.Ս. Ղազարյան, Յ.Ս. Թամոյան**  
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
[eduard\\_ghazaryan@yahoo.com](mailto:eduard_ghazaryan@yahoo.com)

### Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Քանալի բառեր՝**  
 խաղողագործություն,  
 գինեգործություն,  
 վերամշակում,  
 գնագոյացում,  
 արտահանում, ներկրում,  
 ինքնաբավություն,  
 սպառում,  
 իրացում

### Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Գինու և գինեգործական արտադրանքի շուկայի, դրա տնտեսական նշանակության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2014-2017 թթ. Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում արտադրանքի սպառման ծավալները գործնականում եղել են անփոփոխ, իսկ արտահանման տեմպերն աճել են: Համաշխարհային գինեգործական տեխնիկայի արդի պայմաններում Հայաստանը, վարելով պետական նպատակաուղղված քաղաքականություն, գինու համաշխարհային շուկայում որոշակի դիրք գրավելու մեծ հնարավորություն ունի:

### Նախաբան

Հայաստանը խաղողագործության ու գինեգործության հնագույն օջախներից է: Դեռևս Զ.ա. 7-րդ դարում Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես՝ Արարատյան դաշտավայրում, խաղողագործության ու գինեգործության զարգացման նպատակով Ուրարտուի կառավարիչները զբաղվել են ոռոգման համակարգերի հողահարթակների կառուցմամբ և գինեգործական սարքերի թողարկմամբ (Ն.Բ. Կազումով, Կ.Ն. Կազումյան, 1992):

Խաղողագործությունը և գինեգործությունը Հայաստանի տնտեսության ավանդական ու եկամտաբեր ճյուղերից են:

### Նյութը և մեթոդները

ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի վիճակագրական ժողովածուներում հրապարակված տվյալների և

մեր ուսումնասիրությունների հիման վրա կատարվել է խաղողագինեգործական արտադրանքի շուկայի և տնտեսական նշանակության վերլուծություն: Կիրառվել են գիտական հետազոտության, հաշվարկագրաֆիկական, համեմատական, վիճակագրական և գիտական ընդհանրացման մեթոդները:

### Արդյունքները և վերլուծությունը

Վերջին տարիներին Հայաստանում նկատվում է խաղողի քիչմիջային սորտերի պահանջարկի կտրուկ աճ, ինչը պայմանավորված է արտահանման ծավալների ավելացմամբ և գների բարձրացմամբ. վերջին երկու տարիներին իրացման գինը կազմել է 450-700 դրամ: Խաղողը հիմնականում արտահանվում է ԱՊՀ երկրներ, մասնավորապես՝ ՌԴ և Ուկրաինա: Ըստ սեզոնի, սորտի և որակի՝ ռուսական շուկայում ներկրված խաղողի գները տատանվում են 2,20-3,95 ԱՄՆ դոլլար/կգ սահմանում, որտեղ հայկական քիչմիջային սորտերի

խաղողը բարձր գնային սեգմենտում է: Քիչմիջա-  
յին սորտերի խաղողը միաժամանակ բարձրորակ  
հումք է չամիչի և գինու արտադրության համար, ին-  
չը հնարավորություն է տալիս վերամշակել և իրացնել  
ոչ բավարար ապրանքային տեսք ունեցող խաղողը  
(Քիչմիջային սորտերի խաղողի արտադրության ընդ-  
լայնման ծրագիր, 2013):

Աշխարհում գինու սպառումը սրընթաց կերպով աճում  
է (տարեկան 10-15 %), ինչին, մեր կարծիքով, մեծապես  
նպաստել են վերջին շրջանում կարմիր գինու օգտակա-  
րության մասին հրապարակումները: Համաշխարհային  
գինեգործության արդի իրավիճակը հնարավորություն է  
տալիս փոքր երկրներին մուտք գործել գինու միջազգա-  
յին շուկա և հաստատվել: Հարկ է նշել, որ Հայաստանը,  
ունենալով գինու արտադրության հին ավանդույթներ,  
միջազգային շուկաներում դեռևս ճանաչված երկիր չէ,  
և պետական նպատակաուղղված քաղաքականության  
շնորհիվ միայն կարող է ճանաչում ձեռք բերել:

Հայաստանում գործում է խաղողի վերամշակման շուրջ  
54 կազմակերպություն, որոնցից 12-ը՝ համեմատաբար  
խոշոր (<http://minagro.am>):

Հայկական գինեգործական արտադրանքի արտահա-  
նումը խիստ կենտրոնացված է. առավելագույն մաս  
է կազմում ՌԴ շուկան: Արտահանման ծավալների  
փոփոխությունը պայմանավորված է Ռուսաստանի  
տնտեսական վիճակով և միջազգային քաղաքակա-  
նությամբ: Օրինակ՝ 2006 թ. արգելվեց Վրաստանից,  
մասամբ նաև Մոլդովայից գինու ներմուծումը ՌԴ, ինչի  
արդյունքում 2007 թ. մոտ երեք անգամ աճեց Հայաս-  
տանից գինու արտահանումը դեպի Ռուսաստան:

Նշվածը որոշակի ազդակ է ոգելից խմիչքներ արտա-  
հանողների կողմից նոր շուկաներ բացահայտելու և  
մուտք գործելու, ռուսական շուկայից կախվածությու-  
նը նվազեցնելու համար: Հարկ է նկատի ունենալ, որ  
պարբերաբար փոխվում են Ռուսաստան ներմուծվող  
ապրանքների նկատմամբ որակական և տեխնիկական  
պահանջները: Կարևոր ռիսկերից է ՌԴ ռուբլու արժե-  
զրկումը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական և  
գլոբալ տնտեսական զարգացումներով, ինչի հետևան-  
քով Հայաստանի գինեգործական կազմակերպություն-  
ները վերջին տարիներին լուրջ վնասներ կրեցին:

Տեղական շուկայի սահմանափակության և արտաքին  
մեկ շուկայից կախվածության բարձր ռիսկի պարագա-  
յում հայ գինեգործների համար էական նշանակություն  
ունի արտադրանքի բաշխումը դեպի արտաքին տար-  
բեր շուկաներ: Թեև հայկական գինին արտահանվում  
է ԱՄՆ, ԵՄ երկրներ և Վրաստան, գինեգործական ըն-  
կերությունները փորձում են նոր գործընկերներ գտնել  
և դիվերսիֆիկացնել արտահանման ուղղությունները,  
այդուհանդերձ հայկական գինու արտահանման 72 %-ը  
բաժին է ընկնում ռուսական շուկային (2016 թ. ար-  
տահանվել է 4,493 հազ. դոլար գումարային արժեքով

գինի): Պետք է նաև նշել, որ վերջին տարիներին ար-  
տահանման աշխարհագրությունը կառուցվածքային  
առումով բավական կայուն է եղել: Թեև 2014 թ. մեծ ծա-  
վալներին հաջորդեց մոտ 50 %-ով կրճատումը՝ պայմա-  
նավորված ռուբլու արժեզրկմամբ, սակայն 2016 թ. այդ  
ծավալները վերականգնվեցին («Հայաստանում գյու-  
ղական տարածքների տնտեսական զարգացման հիմ-  
նադրամի» կողմից Հայաստանում խաղողագործության  
և գինեգործության շուկայի ուսումնասիրության վերա-  
բերյալ հաշվետվություն, 2017, [http://freda.am/wp-content/  
uploads/Final-Report-Grape-and-Wine-Final1.pdf](http://freda.am/wp-content/uploads/Final-Report-Grape-and-Wine-Final1.pdf)):


Սննդամթերքի արտադրությունը, որն արտահանման  
կառուցվածքում իր ծավալներով երկրորդն է՝ 14 %, կա-  
րևոր դեր ունի նաև Հայաստանի գյուղատնտեսության  
զարգացման համար: Օրինակ՝ կոնյակի գործարան-  
ները մթերում են Հայաստանի խաղողի բերքի 60 %-ը՝  
ոլորտում ապահովելով ավելի քան 8000-10 000 աշխա-  
տատեղ (ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրա-  
պետության արտահանման ուղղված արդյունաբերա-  
կան քաղաքականության» ռազմավարություն, 2011):

ՀՀ գինու և կոնյակի արտադրության, արտահանման,  
ներմուծման, ինքնաբավության մակարդակը և իրաց-  
ման կառուցվածքում տեղական արտադրության  
մասնաբաժինը 2015-2017 թթ. ներկայացված են  
աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** ՀՀ գինու և կոնյակի արտադրության, ար-  
տահանման, ներմուծման, ինքնաբավու-  
թյան մակարդակը և տեղական արտա-  
դրության մասնաբաժինը իրացման  
կառուցվածքում 2015-2017 թթ.\*

Արտադրանքը	2015 թ.	2016 թ.	2017 թ.
<b>Տեղական արտադրություն (հազ. լ)</b>			
Գինի	6590,0	7523,0	9716,3
Կոնյակ	16037,5	21529,2	30040,6
<b>Արտահանում (հազ. լ)</b>			
Գինի	1451,6	1855,2	2791,8
Կոնյակ	15807,8	20518,8	28313,8
<b>Ներմուծում (հազ. լ)</b>			
Գինի	312,1	272,2	551,0
Կոնյակ	6,5	5,5	93,0
<b>Ինքնաբավության մակարդակը (%)</b>			
Գինի	120,9	126,6	130,0
Կոնյակ	6789,8	2119,2	1650,8
<b>Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը (%)</b>			
Գինի	94,3	95,4	92,6
Կոնյակ	97,2	99,5	94,9

\* <http://minagro.am>



**ՊՈ. 1.** Գյուղացիական տնտեսությունների կողմից բոլոր ուղիներով իրացված խաղողի միջին և մանրածախ գների դինամիկան (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Պարենային ապահովություն և աղքատություն, 2017):

Հայաստանում գինեգործությունը կարևոր դեր ունի նաև ագրոտուրիզմի զարգացման գործում. մեծ թվով զբոսաշրջիկներ են մասնակցում ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում կազմակերպվող ամենամյա «Արենի» գինու փառատոնին, որը հնարավորություն է տալիս բնակիչներին ներկայացնել իրենց պատրաստած հուշանվերները, չրերը, գինիները, զբոսաշրջիկներին հաղորդակից դարձնել տարածաշրջանին բնորոշ առանձնահատկություններին ու կենցաղին:

Ըստ Հայաստանի գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված (բոլոր ուղիներով) խաղողի միջին և մանրածախ գների դինամիկայի (ՊՈ. 1) վերլուծության՝ ինչպես գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված մթերքի միջին գների, այնպես էլ մանրածախ գների մակարդակի դինամիկան վերջին հինգ տարիների կտրվածքով տատանողական բնույթ է ունեցել:

Խաղողի գնագոյացման վրա ազդող գործոնների և առանձնահատկությունների, ինչպես նաև սպառման կառուցվածքի առավել համակողմանի վերլուծության և բացահայտման համար կարևոր է նաև դիտարկել խաղողի սպառման, ներմուծման, արտահանման, ինքնաբավության մակարդակի ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև խաղողի մթերման ծավալները:

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ խաղողի վերամշակման ծավալները 2016 թ. շուրջ 2 անգամ կրճատվել են նախորդ տարվա համեմատ, իսկ սննդի մեջ օգտագործման համար նախատեսված խաղողի ծավալները երեք տարիներին գրեթե չեն փոփոխվել: Նույնն է նաև մեկ շնչի հաշվով սպառման ծավալների պատկերը. ինքնաբավության մակարդակի ցուցանիշը 2014-2015 թթ. գրեթե անփոփոխ է մնացել՝ համապատասխանաբար 101,9 և 101,2 %, իսկ 2016 թ. ցուցանիշը բարելավվել է շուրջ 18,1 %-ով:

Խաղողի արտաքին ապրանքաշրջանառությունը դրական միտում ունի. 2016 թ. նախորդ երկու տարիների

**Աղյուսակ 2.** Հայաստանում խաղողի արտադրությունը, ինքնաբավության մակարդակը և սպառումը 2014-2016 թթ.\*

Տարիներ	Արտադրություն	Ներմուծում	Արտահանում	Վերամշակում	Սննդի մեջ օգտագործում	Տարեկան սպառում	Ինքնաբավության մակարդակ
2014 թ.	261,3	3,0	7,8	184,1	13,5	4,7	101,9
2015 թ.	309,2	2,8	6,5	216,8	13,1	4,7	101,2
2016 թ.	178,8	3,8	32,7	109,8	12,4	4,4	119,3

\*Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Պարենային ապահովություն և աղքատություն, 2017:

համեմատ արտահանման ծավալներն ավելացել են 4,0-4,5 անգամ, իսկ ներմուծման ծավալներն էականորեն չեն ավելացել:

Խաղողի արտաքին ապրանքաշրջանառության առումով պետք է նշել, որ նախորդ երկու տարիների համեմատ 2016 թ. արտահանման ծավալներն ավելացել են 4,0-4,5 անգամ՝ ներմուծման ծավալների ոչ շոշափելի աճի պայմաններում: Իսկ 2017 թ. արտահանման ծավալները շուրջ 8 անգամ գերազանցել են ներմուծումը:

**Եզրակացություն**

Խաղողագործությունը և գինեգործությունը, որպես Հայաստանի տնտեսության առաջատար և եկամտաբեր ճյուղեր, ապահովում են խաղող արտադրող տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության բարձր արդյունավետություն:

Խաղողի արտահանման ծավալների աճի նման միտումը հնարավորություն կտա, որ Հայաստանից արտահանվող խաղողը բարձր որակական հատկանիշներով շարունակաբար ավելի մեծ տարածում գտնի արտաքին շուկաներում, մասնավորապես՝ ՌԴ-ում, կայուն դիրքեր և բարձր պահանջարկ ունենա: Դա երկրում սեղանի սորտերի այգետարածքների ավելացման և խաղողագործության զարգացման լավագույն նախադրյալներ կստեղծի՝ խթանելով գյուղական տարածքների բնակչության եկամուտների կազմավորումն ու ավելացումը: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ արտահանման ծավալների մեծացումը կարող է ազդել ներքին շուկայում խաղողի գնագոյացման վրա, քանի որ տեղական սպառման համար առաջարկը կկրճատվի, և սեղանի խաղողի գները կբարձրանան: Սակայն պետության կողմից համապատասխան գործիքա-

կազմի կիրառման, մասնավորապես՝ աջակցության ծրագրերի և արտաքին առևտրի կարգավորման կառուցակարգերի իրականացման միջոցով հնարավոր է խթանել խաղողի սեղանի սորտերի արտադրության զարգացումն ու կարգավորել արտահանումը:

Խաղողի մանրածախ գները մի քանի անգամ գերազանցում են մյուս բոլոր ուղիներով իրացված միջին գները, քանի որ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 70 %-ը վերամշակող կազմակերպությունները մթերում են ցածր գներով, իսկ մնացած 30 %-ը բաժին է ընկնում ապրանքաշրջանառությանը, մասնավորապես՝ մանրածախ առևտրի ոլորտին: Բացի այդ՝ սառնարաններում պահվող խաղողը ևս տարվա ընթացքում վաճառվում է սեզոնայինից էապես բարձր գներով: Նշված գործոններին գումարվում է ևս խաղողի արտահանման ծավալների աճի միտումը, ինչը ևս բացասաբար է ազդում խաղողի գնադյացման վրա:

Վերջին երեք տարիների պաշտոնական տվյալներով նկատվում է գինու և կոնյակի տեղական արտադրության և արտահանման ցուցանիշների աճի միտում: 2015-2017 թթ. արձանագրվել է գինու և կոնյակի ներմուծման ծավալների աճ (բնեղեն արտահայտությամբ), իսկ իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը մի փոքր նվազել է: Մեր գնահատմամբ վերջինս գինու և կոնյակի շուկայի բարձր գնային սեգմենտում ներկրված արտադրանքի ուղղությամբ սպառողական նախընտրության փոփոխության արդյունք է:

Եվ, վերջապես, աշխարհում գինեգործության ներկայիս վիճակը իրական հնարավորություններ է ընձեռում հայ գինեգործներին հաստատվել գինու համաշխարհային շուկայում:

**Գրականություն**

1. Կազումով Ն.Բ., Կազումյան Կ.Ն. Հայաստանի խաղողի ու պտղահատապտղային գինիների տեխնոլոգիա. - Եր.: Առաջընթաց, 1992. - 488 էջ:
2. Այվազյան Պ.Կ., Այվազյան Գ.Պ. Խաղողագործություն սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով. - Եր.: Սարվարդ, 2003. - 632 էջ:
3. Գրիգորյան Կ.Ա., Գրիգորյան Կ.Կ., Մանասարյան Ա.Ա. Խաղողի արտադրության, վերամշակման Էկոնոմիկայի և մարքեթինգի հիմնահարցերը ագրարային բարեփոխումների անցումային փուլում. - Եր.: ՀԳԱ, 2000. - 60 էջ:
4. «Հայկական բերքի առաջնիման կենտրոն» ՓԲԸ: Զիշմիշային սորտերի խաղողի արտադրության ընդլայնման ծրագիր. - Եր., 2013. - 33 էջ:
5. «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» կողմից Հայաստանում խաղողագործության և գինեգործության շուկայի ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվություն. - Եր., 2017. - 102 էջ, <http://freda.am/wp-content/uploads/Final-Report-Grape-and-Wine-Final1.pdf> (դիտվել է՝ 18.12.2017 թ.):
6. ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարություն, 2011 թ. - 29 էջ:
7. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թվականի հունվար-դեկտեմբեր: Վիճակագրական տեղեկագիր. - 110 էջ:
8. <http://minagro.am> (դիտվել է՝ 2015-2019 թթ.):

**АННОТАЦИЯ**

**Рынок вина и винодельческой продукции и его экономическая значимость в Республике Армения**

Анализ рынка вина и винодельческой продукции и его экономической значимости показывает, что в период с 2014 по 2017 годы объемы потребления продукции на внутреннем рынке Республики Армения были практически постоянны, а темпы ее экспорта возрастают. В современных условиях мировой винодельческой техники Армения, руководствуясь целенаправленной государственной политикой, имеет большие возможности занять определенную позицию на мировом рынке вина.

**ABSTRACT**

**Vine and Wine-Making Product Market and Its Economic Relevance in the Republic of Armenia**

The analyses of Vine and Wine-Making product market and its economic relevance indicate that within 2014 and 2017 the sizes of product consumption in internal market of the Republic of Armenia are almost constant, while its exportation rate is increasing. In the current state of world wine-making techniques. Armenia has a great opportunity to take a specific position in the world wine market under the guidance of targeted state policy.

Ընդունվել է՝ 16.04.2019 թ.  
Գրախոսվել է՝ 10.06.2019 թ.